

“ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ԱՂՏՈՏԻՉՆԵՐԻ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ և ՏԵՂԱՓՈԽՄԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ (ԱԱՏՌ) ՈՒ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ”



“Ազգային զարգացման գիտակրթական կենտրոն” (ԱԶԳԿ) ՀԿ

ԱՂՏՈՏԻՉՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ և ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Աղտոտիչների արտանետումների և տեղափոխման ռեգիստրի մասին արձանագրությունը ընդունվել է 2003թ. մայիսի 21-ին Օրհուսի կոնվենցիայի մասնակից կողմերի՝ Կիևում կայացած Եվրոպայի բնապահպանության նախարարների 5-րդ կոնֆերանսում:



ԱԱՏՌ արձանագրության հիմնական նպատակն է ընդլայնել տեղեկատվության մատչելիությունը հասարակության համար՝ ստեղծելով ԱԱՏ մասին հետևողական, համապարփակ, համազգային ռեգիստրներ, որոնք կարող են աջակցել հասարա-



կության մասնակցությունը, բնապահպանական որոշումների ընդունմանը, ինչպես նաև նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը և աղտոտման նվազեցմանը:

Հայաստանը
ստորագրել է
“Աղտոտիչների
արտանետումների և
տեղափոխման
ռեգիստրի” մասին
արձանագրությունը
2003թ. մայիսի 21-ին
Կիևում կայացած
նախարարների 5-րդ
կոնֆերանսում:

ECONOMIC COMMISSION FOR EUROPE

Protocol on Pollutant Release and Transfer Registers
to the Convention on Access to Information, Public
Participation in Decision-making and Access to
Justice in Environmental Matters

COMMISSION ÉCONOMIQUE POUR L'EUROPE

Protocole sur les registres des rejets et transferts de
polluants à la Convention sur l'accès à l'information,
la participation du public au processus décisionnel
et l'accès à la justice en matière d'environnement

ЕВРОПЕЙСКАЯ ЭКОНОМИЧЕСКАЯ КОМИССИЯ

Протокол о регистрах выбросов и переноса
загрязнителей к Орхусской конвенции о доступе к
информации, участию общественности в процессе
принятия решений и доступе к правосудию по
вопросам, касающимся окружающей среды

UNITED NATIONS



NATIONS UNIES

ОРГАНИЗАЦИЯ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ

ԽՆԴՐԻ ՆԱԽԱԿԱՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱՏՌ-ները արդյունաբերության կամ այլ աղբյուրներից առաջացած աղտոտիչների հաշվառման ռեգիստրներ են: Շատ երկրներում դրանք արդյունավետ գործիք են շրջակա միջավայրի կառավարման համար, քանի որ դեպի օդ, ջուր և հող տարբեր թունավոր նյութերի արտանետումների և տեղափոխման մասին կառավարության, արդյունաբերության և հանրության համար իրազեկման աղբյուր են :



Ծրագրի նպատակն է

- Ընդլայնել հասարակության տեղեկացվածությունը Հայաստանի 3 մարզերում (Կոտայք, Լոռի, Սյունիք) ԱԱՏՌ-ի մասին:
- Նպաստել Հայաստանում բնակչության և ձեռնարկատերերի (գործարար հասարակության) ներգրավմանը ԱԱՏՌ-ի ստեղծման և իրագործման քաղաքականության մշակման մեջ:

Ծրագրի գործողությունները

Ծրագրի շրջանակներում նախատեսվող գործողություններն ուղղված են կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների (Մարզկենտրոններ և գործարար հասարակություն), ՀԿ-ների ու բնակչության խմբերի ակտիվ ներգրավվածությանը և համագործակցությանը հասարակության տեղեկացվածության բարձրացման գործընթացում, ինչպես նաև ակտիվ համագործակցությանը մարզային Օրիուս կենտրոններ հետ:



Սպասվող արդյունքները

- **Արդյունք 1** ԱԱՏՌ-ի մասին տեղեկացվածության ընդլայնում տարածքային և քաղաքական իշխանությունների, գործարար հասարակության և բնակչության շրջանում:
- **Արդյունք 2** Հայաստանում ԱԱՏՌ համակարգի զարգացման համար համապատասխան հանձնարարականների մշակում:



WWW.ABOLAR.COM